ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 321-Ա 01 հունիսի 2026 թ.

ՄԽԻԹԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՎԱՂԱՇԵՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.5-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-L որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները, ինչպես նաև Մխիթար Գրիգորյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Մխիթար Գրիգորյանին 2026 թվականի հունիսի 2-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վաղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև 2026 թվականի սեպտեմբերի 11-ը ներառյալ:

2. Մխիթար Գրիգորյանին՝ աշխատանքը սկսել 2026 թվականի հունիսի 2-ից:

01.06.2026

ՋԱՆԻԿ ԲԱԶԵՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Подписано: BAZEYAN JANIK 2208850319

Ջ. ԲԱԶԵՅԱՆ

ք. Գավառ